ՀՀ ԿԳՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹԵԹԵՎ ՄՏԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ

«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ»

ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

2-4-րդ դասարաններ

ԵՐԵՎԱՆ – 2012

ՀՏԴ 376: 502/504 (073)
ԳՄԴ 74.3 + 20.1 g 72
Թ 383

Հաստատված է ՀՀ ԿԳ նախարարի 08.11.2012 թ. №1018-Ա/Ք հրամանով

Կազմողներ՝ Ա. Հովսեփյան. Ա. Գյուլբուդաղյան

Թ 383 Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ծրագիր : 2-4-րդ դասարաններ /ՀՀ ԿԳՆ. Կրթության ազգային ինստիտուտ; Կազմ՝ Ա. Հովսեփյան, Ա. Գյուլբուդաղյան. - Եր. : ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, 2012. – 48 էջ:

ՀՏԴ 376: 502/504 (073)
ԳՄԴ 74.3 + 20.1 g 72

ISBN 978 – 9939 – 806 – 56 – 3

© ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2012

1. Բացատրագիր

Թեթև մտավոր խնդիրներ ունեցող երեխաների «Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դասարաններ) առարկայի ծրագրի մշակման համար հիմք են ծառայել ՀՀ «Կրթության մասին» օրենքը, ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքը, Հանրակրթության պետական չափորոշիչը, հանրակրթական տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դասարաններ) առարկայի չափորոշիչը և ծրագիրը (հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 26. 01. 2012 թ. N 63-Ա/Ք հրամանով):

Թեթև մտավոր խնդիրներ ունեցող երեխաների «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ծրագիրը ներառում է՝

- *հայեցակարգը*, որը ներկայացնում է առարկայի գործառույթները որոշելու առումով կողմնորոշիչ դեր ունեցող հիմնադրույթներ,
- *առարկայի ուսումնական ընդհանուր նպատակները,*
- *առարկայի ծրագրի կառուցվածքը*
- *ուսումնական թեմաների բովանդակությունը և ժամաքանակը, սովորողների պատրաստվածությանը (գիտելիքներ, կարողություններ և հմտություններ) ներկայացվող պահանջների նկարագրությունը,*
- *ուսումնական գործունեության տեսակները.*
- *գրականության ցանկը:*

2. Հայեցակարգ

Հանրակրթության պետական չափորոշչի համաձայն՝ «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան «Բնություն, բնական գիտություններ» և «Հասարակություն, հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառները ներկայացնող ինտեգրված պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար:

Տարրական դպրոցում բնության տարրերի ու երևույթների ուսումնասիրությունը, սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ, պետք է հնարավորություն ընձեռի բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով սովորողի մեջ զարգացնելու Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ճանաչողության մեթոդները: Բնության անկենդան և կենդանի տարրերի, մարդու, Երկիր մոլորակի՝ որպես մարդկության ընդհանուր տան, ուսումնասիրությունը անհրաժեշտ է իրականացնել՝

ա) սովորողի շրջապատում (տուն, բնակավայր, բնական լանդշաֆտ) դիտվող բնության տարրերի և երևույթների դիտարկումների, պարզունակ փորձերի նկարագրության,

բ) սովորողի կողմից սեփական օրգանիզմը ճանաչելուն, առողջության պահպանմանը և անվտանգ կենսագործունեություն ծավալելուն ուղղված ուսումնական գործունեության տեսակների,

գ) իր շրջապատը հետազոտելու, դրա վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումներ կատարելու տարրական կարողությունների ապահովման,

դ) Հայաստանի բնության բազմազանության, բնական ու հասարակական օբյեկտների ու երևույթների վերաբերյալ տարրական գիտելիքների ձևավորման,

ե) մայրցամաքների հայտնագործման ու հետազոտության մասին պատմությունների միջոցով:

7-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամության ձևավորմանն ուղղված հարցերը: Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը:

Հանրակրթության նպատակների և կրթական բարեփոխումների խնդիրների տեսանկյունից կարևոր է առարկայի բովանդակության մեջ այնպիսի թեմաների ներառումը, որոնք կապահովեն երեխայի՝ որպես աճող անհատականության սոցիալականացման, ինչպես նաև աշխարհաճանաչման և մարդկային հասարակության նկատմամբ սեփական դիրքորոշումը և հարաբերությունները ճշտելու, դրա միջոցով դեպի իրավական պետություն տանող ճանապարհի առաջին քայլերն անելու, իր երկրի արժանավոր քաղաքացի դառնալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

3. Առարկայի ուսումնական ընդհանուր նպատակները

Տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է.

- սովորողներին ***ծանոթացնել*** իրենց շրջապատող աշխարհին, այնտեղ կատարվող բնական-հասարակական երևույթներին ու օբյեկտներին, մարդկային հարաբերություններին,
- ***սովորեցնել*** ճանաչել սեփական օրգանիզմը, ծանոթացնել օրգանիզմի խնամքի և հիգիենայի հիմնական կանոններին,
- ***սովորեցնել*** արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել ուրիշ մարդկանց հետ, նրանց մեջ ***ձևավորել*** իրենց և շրջակա աշխարհը ճանաչելու հմտություններ,
- ***նպաստել*** սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորմանը,
- ***օգնել*** դառնալու աշակերտական կոլեկտիվի լիիրավ անդամ, ձևավորել և զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու, սեփական արարքները վերահսկելու, դրանց համար պատասխանատու լինելու գիտակցություն,
- ***նպաստել*** սովորողների ինքնադրսևորման և ինքնարտահայտման հմտությունների ձևավորմանը,

- ***ձևավորել*** առողջ ապրելակերպին նպաստող վարքագիծ, բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության գիտակցում,
- ***նպաստել*** սեփական երկրի պատմամշակութային արժեքների ժառանգորդը լինելու գիտակցության ձևավորմանը:

«Ես և շրջակա աշխարհը» դասընթացը կոչված է օգնելու երեխային՝ ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության մասնիկ: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը: Թեմաներն ընտրված են այնպես, որ աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, իր սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և, ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի:

Կրտսեր դպրոցականի պատկերացումները ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ: Երեխաներն ուսումնասիրում են իրենց բակը, քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան և անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանում են տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, սովորում են հասարակական վայրերում օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք են բերում հաղորդակցական հմտություններ, առողջ և անվտանգ ապրելակերպի համար անհրաժեշտ կարողություններ:

Տարրական դպրոցում սովորողի գիտելիքները սերտորեն առնչվում են մայրենիին, մաթեմատիկային և այլ ուսումնական առարկաների: Հարկավոր է նկատառել, որ այս դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները արժեքավոր են որպես հենք նոր գիտելիքների համար: Դասընթացի բոլոր թեմաների ուսումնասիրության ժամանակ կարևոր է ապահովել բազմաբնույթ գործնական աշխատանքների կիրառումը:

4. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների «Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դասարաններ) առարկայի ծրագրի կառուցվածքը

ՀՀ կրթության համակարգի օրենսդրության մեջ վերջին շրջանում ամրագրված դրույթները (օրենքներ), պահանջում են հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել առանձնահատուկ պայմանների կարիքներով երեխաների համար: Այդ երեխաներին հանրակրթության մեջ ներառելու, իրենց հասակակիցների հետ հավասար պայմաններում սովորելու, ուսուցման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով, Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան, մշակվել են «Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության պետական չափորոշիչը» և «Չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության պետական չափորոշիչը»: Այս փաստաթղթերի նպատակն է առանձնահատուկ կարիքներով երեխաներին ներառել հանրակրթություն՝ իրենց հասակակիցների հետ հավասար պայմաններում սովորելու համար: Այդ իսկ նպատակով էլ մշակվել է «Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների «Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դասարաններ) առարկայի ծրագիրը»:

Ծրագիրը նախատեսված է որոշակի ուսումնական դժվարություններ ունեցող սովորողին հատուկ ուշադրություն և անհատական աջակցություն ցուցաբերելու և կրթությանը հավասար հնարավորություններով մասնակցելու նրա իրավունքն ապահովելու համար: Այն ուղղված է ուսուցչին, նրա աշխատանքային գործունեության հիմքն է, ինչ-

պես նաև ուղիներ է մատնանշում սովորողի անհատական ուսուցման գործընթացի կազմակերպման համար:

Ծրագրի կառուցվածքի հիմքում դրված են առանձին թեմատիկ բաղադրիչներ, որոնցում թեմայի բովանդակությանը զուգահեռ տրված են նաև տվյալ թեմայի ուսումնասիրության արդյունքում ակնկալվող արդյունքները (ուսումնառության վերջնարդյունքում սովորողի կողմից ձեռքբերվող գիտելիքները, կարողություններն ու հմտությունները):

«Ես և շրջակա աշխարհը» դասընթացը նպատակ ունի ծանոթացնել երեխային իրեն շրջապատող աշխարհի հետ, որոշակի տեղեկություններ հաղորդել իր շուրջը գտնվող տարբեր օբյեկտների, իրերի, երևույթների վերաբերյալ, ընդլայնել նրա մտահորիզոնը, պատկերացումները:

Ծրագրային դրույթները շարադրված են ըստ ուսումնական փուլերի: Ուսումնական նյութի մատուցումն իրականացվում է աստիճանաբար՝ սովորողի հնարավորություններին, կարիքներին ու հետաքրքրություններին համապատասխան: Կարևոր է անպայման հաշվի առնել այն հանգամանքը, որ յուրաքանչյուր սովորող ունի աշխատանքի իր տեմպը, հետևաբար անհրաժեշտ է ցուցաբերել անհատական մոտեցում՝ յուրաքանչյուրին տալով իր կարողություններին ու առանձնահատկություններին համապատասխան հանձնարարություն: Հետևաբար կարևորվում է յուրաքանչյուր սովորողի համար կազմած անհատական ուսումնական պլանը՝ ըստ նրա կրթական կարիքների ու հնարավորությունների:

Ծրագրի բովանդակությունը ճկուն է, մատչելի և անմիջական կապ ունի այն ամենի հետ, ինչ շրջապատում է յուրաքանչյուր սովորողի:

Դասընթացի ծրագիրը կազմված է երեք մասից և նախատեսվում է 2-4-րդ դասարանների համար:

Առարկային հատկացվում է.

2-րդ դասարանում - շաբաթական 1 ժամ, տարեկան 32 ժամ,

3-րդ դասարանում - շաբաթական 1 ժամ, տարեկան 34 ժամ,

4-րդ դասարանում - շաբաթական 2 ժամ, տարեկան 68 ժամ:

5. «Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դասարաններ) առարկայի ծրագրի թեմատիկ շարք

2-րդ դասարան

(շաբաթական 1 ժամ, տարեկան 32 ժամ)

Թեմա 1. Ով եմ ես (2 ժամ)

Թեմա 2. Ես և իմ ընտանիքը (3 ժամ)

Թեմա 3. Ես և դպրոցը (2 ժամ)

Թեմա 4. Իմ տունը, իմ բակը, իմ փողոցը (2 ժամ)

Թեմա 5. Քաղաք և գյուղ (1 ժամ)

Թեմա 6. Բնությունն իմ շուրջ (12 ժամ)

Թեմա 7. Առողջություն և անվտանգ կենսագործունեություն (5 ժամ)

3-րդ դասարան

(շաբաթական 1 ժամ, տարեկան 34 ժամ)

Թեմա 1. Ես և իմ շրջապատի մարդիկ (5 ժամ)

Թեմա 2. Ինչպես եմ կազմակերպում իմ կյանքը (3 ժամ)

Թեմա 3. Երկնային մարմիններ (2 ժամ)

Թեմա 4. Տարվա եղանակներ (6 ժամ)

Թեմա 5. Մեր առողջությունը (10 ժամ)

Թեմա 6. Անվտանգությունը մեր շրջապատում (3 ժամ)

4-րդ դասարան

(շաբաթական 2 ժամ, տարեկան 68 ժամ)

Թեմա 1. Բնություն (12 ժամ)

Թեմա 2. Մարմիններ, նյութեր, մասնիկներ (5 ժամ)

Թեմա 3. Բնությունը և մարդը (9 ժամ)

Թեմա 4. Մեր հայրենիքը (11 ժամ)

Թեմա 5. Ճանապարհորդություններ և աշխարհագրական հայտնագործություններ (11 ժամ)

Թեմա 6. Ես և հասարակությունը (7 ժամ)

Յուրաքանչյուր դասարանում որոշակի ժամաքանակ հատկացվում է կրկնությունների, ամփոփումների, թեմատիկ, գործնական և կիսամյակային ամփոփիչ աշխատանքների անցկացմանը:

6. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ծրագրի բովանդակությունը և սովորողներին ներկայացվող պահանջներ

2-րդ դասարան
(շաբաթական 1 ժամ, տարեկան 32 ժամ)

Թեմա 1. Ով եմ ես (2 ժամ)

Ով եմ ես. ճանաչում եմ ինքս ինձ: Իմ նախասիրությունները, նպատակները, սովորությունները: Ինչով եմ նման ու տարբեր մյուսներից: Ինչպես եմ ընկալում աշխարհը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

կկարողանա՝

ներկայանալ,

խոսել իր մասին,

նկարագրել իր արտաքինը (հասակը, աչքերի և մազերի գույնը, հագուստը և այլն),

նկարագրել դասընկերոջ արտաքինը,

առանձնացնել տղաների և աղջիկների լուսանկարներ,

նկարագրել իր նախասիրությունները,

տարբերակել իր հույզերը,

տարբերակել զգայարաններով ստացած տեղեկությունները,

ընկալել իր և ընկերների տարբերություններն ու առանձնահատկությունները,

նկարագրել տարբեր իրավիճակներում ունեցած իր հույզերը:

Թեմա 2. Ես և իմ ընտանիքը (3 ժամ)

Իմ փոքր և մեծ ընտանիքը: Ով ինչով է զբաղվում. դերերն ընտանիքում: Իմ դերն ընտանիքում:

Հարաբերություններն ընտանիքում, իրավունքներն ու պարտականությունները, համակեցության կանոններ, փոխադարձ հարգանք և հոգատարություն:

Ընտանիքը հանգստանում է, ընտանեկան տոներ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

կկարողանա ներկայացնել իր ընտանիքը, ցույց տալ իր ընտանիքը պատկերող որևէ լուսանկար, պատմել այդ մասին,

կհասկանա «տուն», «ընտանիք», «գերդաստան» հասկացությունները,

կճանաչի ընտանիքում դերերը, պարտականությունները և իրավունքները,

կաջակցի ընտանիքի անդամներին,

կկարողանա առանց խոսքի, ժեստերի լեզվով ցույց տալ, թե ինչպես է օգնում ծնողներին,

կգիտակցի ընտանիքում պարտավորությունների իր բաժինը,

կկարողանա ինքնուրույն ուսումնասիրել և ներկայացնել ընտանեկան տոն պատկերող որևէ նկար (լուսանկար),

կհասկանա փոխօգնության, փոխադարձ վստահության և հոգատար վերաբերմունքի կարևորությունը:

Թեմա 3. Ես և դպրոցը (2 ժամ)

Ինչու եմ դպրոց հաճախում: Ես և իմ ընկերները, մեր դասարանը: Բարեկիրթ հաղորդակցություն: Համագործակցության կարևորությունը: Վարքագիծը դպրոցում: Հարաբերությունները դպրոցում:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

կկարողանա ներկայացնել իր դասարանը, դպրոցի բակը (ինչ կա դասարանում և բակում, ինչի համար են դրանք),

կկիրառի դասարանական կանոնները,

կիմանա հասակակիցների հետ հաղորդակցվելու կանոնները,

կկարողանա լրացնել իր իրավունքներին և պարտականություններին վերաբերող պաստառ,

պատրաստ կլինի աջակցելու ընկերներին,

կկարողանա արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել համադասարանցիների և ուսուցիչների հետ,

կձգտի խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից,

սեփական վարքագծի հնարավոր հետևանքների օրինակներ կբերի:

Թեմա 4. Իմ տունը, իմ բակը, իմ փողոցը (2 ժամ)

Որտեղ եմ ապրում, իմ հարևանները: Իմ փողոցը, թաղը, իմ հասցեն, կողմնորոշվելը շրջակայքում: Համագործակցությունն ու փոխօգնությունը համայնքում:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

կիմանա իր հասցեն, իր անմիջական հարևաններին,

կկարողանա նկարագրել իր տունը (բնակարանը), շրջակայքի մի քանի կառույց,

պատրաստ կլինի օգնել համայնքի անդամներին, տարիքով մեծերին և փոքրերին,

կկարողանա իր բնակավայրում կողմնորոշվելու նպատակով հարցեր տալ և ուղղորդվել դրանցով:

Թեմա 5. Քաղաք և գյուղ (1 ժամ)

Որտեղ եմ ապրում՝ իմ քաղաքը, գյուղը. ինչով է հայտնի, նշանավոր մարդիկ, տեսարժան վայրերը, բնակիչների հիմնական զբաղմունքները:

Հոգատար վերաբերմունք շրջապատի նկատմամբ (մարդկանց, կենդանիների, բույսերի, փողոցի, բակի):

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

կիմանա իր բնակավայրի տեսարժան վայրերը,

հոգատար վարքագիծ կցուցաբերի շրջապատի մարդկանց, բնաշխարհի, նյութական արժեքների նկատմամբ,

կկարողանա մասնակցություն ունենալ իր բնակավայրի բարեկարգմանը,

կցուցաբերի շրջապատը մաքուր պահելու կարողություններ,

կկարողանա ներկայացնել իր բնակավայրի նյութական արժեքները, պատմել իր քաղաքի, գյուղի մասին,

պատկերացում կունենա մեծ և փոքր բնակավայրերի մասին, կկարողանա տարբերել դրանք,

կհարգի ուրիշների աշխատանքը,

կգիտակցի իր դերը շրջակա միջավայրի պահպանության գործում,

կկարողանա խաղային իրավիճակներում հանդես գալ տարբեր դերերում (որպես վաճառող, բժիշկ և այլն) և այդ կերպ սովորել խանութում, հիվանդանոցում և այլ հանրային վայրերում իրեն պահելու կանոնները:

Կրկնություն (1 ժամ)

Թեմա 6. Բնությունն իմ շուրջ (12 ժամ)

Ինչ է բնությունը: Անկենդան մարմիններ, կենդանի օրգանիզմներ: Անկենդան մարմինների և կենդանի օրգանիզմների կապը:

Շրջապատում հանդիպող բույսերը և կենդանիները: Բույսերի (ծառեր, թփեր, խոտաբույսեր) և կենդանիների (միջատներ, ձկներ, թռչուններ, գազաններ) բազմազանությունը: Բույսերի դերը բնության մեջ և մարդու կյանքում (օդի մաքրությունը, բույսերի գեղեցկությունը, հրաշալի դեղատուն, մրգեր, բանջարեղեն, մշակովի և այլ բույսեր):

Ընտանի և վայրի կենդանիներ: Կենդանիները և մարդը: Մենք բնության բարեկամներն ենք (պահպանենք և սիրենք բնությունը):

Գործնական աշխատանքներ. տարվա տարբեր եղանակներին բնության մեջ իրականացող դիտումներ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

նախնական գիտելիքներ կունենա կենդանի օրգանիզմների և անկենդան մարմինների մասին,

կկարողանա՝

տարբերել բնական և մարդու կողմից ստեղծված իրերը և շինությունները, անկենդան բնության տարրերը և կենդանի օրգանիզմները,

տրված նկարներից առանձնացնել կենդանի և անկենդան բնության տարրերը,

կճանաչի՝ իր շրջապատում տարածված կենդանիները, բույսերը,

վայրի և մշակովի բույսերը,

վայրի և ընտանի կենդանիները,

նախնական գիտելիքներ կունենա մարդու կյանքում բույսերի և կենդանիների դերի մասին,

կծանոթանա բույսերի մասերին, տեսակներին,

կիմանա բույսերի նշանակությունը օդի մաքրության պահպանման համար,

կկարողանա թվարկել բույսերից և կենդանիներից ստացվող սննդամթերք,

կիմանա, թե ինչ են դեղաբույսերը,

նկարների միջոցով կծանոթանա վայրի կենդանիներին, կլսի տարբեր կենդանիների ձայներ,

կիմանա բույսերի աճի համար անհրաժեշտ պայմանները (լույս, խոնավություն, ջերմություն, հող),

պատկերացում կունենա սենյակային բույսերի և դրանց խնամքի մասին,

կտարբերակի ծառերը, թփերը, խոտաբույսերը և կենդանիների որոշ խմբերի (միջատներ, ձկներ, սողուններ, երկկենցաղներ, թռչուններ, կաթնասուններ) ներկայացուցիչներին, կբերի համապատասխան օրինակներ, կճանաչի նրանց իր շրջապատում կամ նկարների վրա,

հոգատար վերաբերմունք կդրսևորի կենդանական և բուսական աշխարհի հանդեպ:

Թեմա 7. Առողջություն և անվտանգ կենսագործունեություն (5 ժամ)

Սնունդ, հիգիենա: Ինչպես խուսափել վարակներից:

Անվտանգության պահպանումը տանը և տնից դուրս: Երթևեկության կանոններ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

նախնական գիտելիքներ կունենա սննդի և անձնական հիգիենայի նշանակության, սննդամթերքի ոչ ճիշտ օգտագործման վտանգների և դրանցից խուսափելու միջոցների մասին,

կտարբերակի առողջության համար վնասակար սովորությունները,

կգիտակցի մաքրակենցաղ ապրելակերպի դերը վարակներից խուսափելու համար,

կիմանա՝

տանը և այլուր հնարավոր վտանգավոր իրավիճակների և դրանց հետևանքների մասին,

ճանապարհային երթևեկության կանոնները,

երկրաշարժի ժամանակ պաշտպանվելու տարրական կանոնները,

կհասկանա սեփական վարքագծի և առողջության կապը,

կդրսևորի պատասխանատու վարքագիծ,

կկարողանա կողմնորոշվել տանը և դրսում ստեղծված վտանգավոր և արտակարգ իրավիճակներում,

կկարողանա օգտվել գազօջախից և կենցաղային անվտանգ կառավարվող այլ սարքերից,

կկիրառի անձնական հիգիենայի կանոնները,

կգիտակցի սեփական մարմնի խնամքին և առողջությանը հետևելու, մարմնամարզությամբ զբաղվելու կարևորությունը:

Ամփոփում (1 ժամ)

Պահուստային (3 ժամ)

3-րդ դասարան
(շաբաթական 1 ժամ, տարեկան 34 ժամ)

Թեմա 1. Ես և իմ շրջապատի մարդիկ (5 ժամ)

Ընկերություն, ընկերական հարաբերություններ, վստահություն, փոխօգնություն և համագործակցություն: Տղաների և աղջիկների փոխհարաբերությունը:

Իմ իրավունքները և պարտականությունները:

Արարքներ. դրանց հետևանքները: Վարքի կանոններ:

Միջավայրն, ուր ապրում եմ: Մարդու՝ միջավայրում ունեցած դերի կարևորությունը:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

կզանազանի մարդկանց միջև գոյություն ունեցող տարիքային, սեռային տարբերությունները,

կհասկանա, որ անձնային որակները պայմանավորված չեն սեռով,

կկարողանա՝

գնահատել իր և մյուսների հաջողությունները,

համագործակցել,

պաշտպանել սեփական իրավունքներն ու շահերը,

կգիտակցի իր պարտականությունները,

կտարբերակի արարքներն ըստ հնարավոր հետևանքների,

կունենա պատասխանատու վարք,

կընդունի համակեցության կանոնները,

ուսումնական գործընթացում և խաղերի ժամանակ կստեղծի փոխօգնության և վստահության հարաբերություններ դասընկերների հետ,

կհասկանա, որ փոխօգնությունը և համագործակցությունը փոխշահեկան են, կկարողանա բացատրել դա:

Թեմա 2. Ինչպես եմ կազմակերպում իմ կյանքը (3 ժամ)

Իմ առօրյան, ժամանակի արդյունավետ տնօրինում, օրվա ռեժիմ: Աշխատանք և ժամանց. ինչպես կազմակերպել հանգիստը:

Որոշում կայացնել, խնդիրներ լուծել: Ինչպես հաղթահարել կոնֆլիկտը կամ խուսափել դրանից:

Իմ նախասիրությունները: Իմ նպատակները, ինչպես իրականացնել դրանք:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

կկարողանա՝

կազմակերպել իր առօրյան,

օրվա ռեժիմ կազմել,

պլանավորել իր ժամանակը և գործունեությունը,

տարբերակել աշխատանքը ժամանցից,

կիմանա՝ ինչպես կազմակերպել հանգիստը,

կկարողանա նկարագրել իր նախասիրությունները, հետաքրքրությունները,

կհասկանա կազմակերպված առօրյայի կարևորությունը հաջողության հասնելու համար,

առօրյա կյանքի՝ իրեն վերաբերող տարբեր իրավիճակներում կկարողանա որոշումներ կայացնել,

կհասկանա իր առջև ծառացած դժվարությունները և փորձի ինքնուրույն հաղթահարել դրանք:

Թեմա 3. Երկնային մարմիններ (2 ժամ)

Աստղեր, Արեգակ, Լուսին, Երկիր:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

նախնական գիտելիքներ կունենա աստղերի, Արեգակի, Լուսնի, Երկիր մոլորակի, Երկրի վրա Արեգակի նշանակության մասին,

կիմանա բնության մեջ կատարվող պարբերական երևույթների մասին (գիշեր-ցերեկ, տարվա եղանակներ):

Թեմա 4. Տարվա եղանակներ (6 ժամ)

Օրացույց, տարեթիվ, տարվա եղանակները: Բնությունը տարբեր եղանակներին: Բույսերն ու կենդանիները տարվա տարբեր եղանակներին: Ինչպես է մարդն արձագանքում եղանակի փոփոխություններին:

Գործնական աշխատանքներ. սեզոնային փոփոխությունների դիտումներ, հերբարիումների և աղյուսակների կազմում:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

կիմանա տարվա եղանակները և նրանց ամիսները,

գիտելիքներ կունենա տարվա եղանակներին բույսերի և կենդանիների հետ կատարվող փոփոխությունների մասին,

կկարողանա նկարագրել, թե ինչպես է մարդն արձագանքում տարվա եղանակների փոփոխությանը,

նախնական գիտելիքներ կունենա բույսերի և կենդանիների սնման եղանակի, աճի և շարժունակության մասին,

կկարողանա նկարագրել տարվա տարբեր եղանակներին բույսերի և կենդանիների կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, բնության մեջ դիտումներ կատարել, կազմել հերբարիումներ:

Կրկնություն (1 ժամ)

Թեմա 5. Մեր առողջությունը (10 ժամ)

Իմ մարմինը որպես աշխատող համակարգ. մարմնի կառուցվածքը, օրգաններ:

Ինչպես ենք ընկալում աշխարհը. տեսողության, լսողության, հոտառության, համի, շոշափելիքի զգայարաններ, դրանց հիգիենան:

Մաշկ. մեր օրգանիզմի պաշտպանությունը՝ վերքեր, կոտրվածքներ, այրվածքներ, ցրտահարություն, արևահարություն:

Հիվանդությունների կանխարգելում: Մեր օրգանիզմի պահանջները. առողջ և ռացիոնալ սնունդ: Մաքուր կենցաղ (հիգիենա), կեցվածք, կոփում:

Օգտակար և վնասակար սովորություններ:

Գործնական աշխատանք. առաջին օգնություն:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

կիմանա մարմնի մասերը,

պատկերացում կունենա՝

մարդու օրգանների, զգայարանների, նրանց հիգիենայի,

մաշկի կառուցվածքի մասին (ծակոտիներ, որոնցից արտադրվում են քրտինք և ճարպ),

օրգանիզմի համար մաշկի ամբողջականության և մարմնի հիգիենայի կանոնների պահպանման անհրաժեշտության մասին,

կկարողանա՝

պահպանել մաշկի հիգիենայի կանոնները,

խուսափել մաշկի ամբողջականության խախտման պատճառ հանդիսացող իրավիճակներից,

մաշկի տարբեր վնասվածքների դեպքում ինչպիսի առաջին օգնություն է անհրաժեշտ ցույց տալ,

կիմանա վերքերի, կոտրվածքների, այրվածքների, ցրտահարության, արևահարության մասին,

նախնական գիտելիքներ կունենա որոշ վարակիչ հիվանդությունների և դրանց կանխարգելման միջոցների մասին,

կկարողանա ցույց տալ մարդու օրգանները, իր տեսողական, լսողական, համի և հոտառության զգայարանները (աչքերը, ականջները, քիթը, բերանը),

կիմանա, թե ինչ է ճիշտ սնունդը,

կկարողանա՝

իր մոտ ճիշտ կեցվածք ձևավորել,

տարբերել օգտակար և վնասակար սովորությունները,

հետևել օգտակար սովորություններին,

կիմանա՝

զգայարանների անհրաժեշտությունը մարդու համար,

լայն տարածում ունեցող վարակիչ հիվանդությունների ախտանիշները և դրանցից խուսափելու ուղիները,

կկարողանա կողմնորոշվել և առաջին օգնություն ցուցաբերել վերքերի, արևահարության, ցրտահարության, այրվածքների դեպքում:

Թեմա 6. Անվտանգությունը մեր շրջապատում (3 ժամ)

Վտանգները մեր շրջապատում: Պատահարներ և ծայրահեղ իրավիճակներ:

Պաշտպանությունը բնական աղետների ժամանակ: Ինչպես պաշտպանվել երկրաշարժի ժամանակ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

կիմանա՝

տարբեր վտանգավոր իրավիճակների մասին,

բնական աղետներից (երկրաշարժ, փոթորիկ, ջրհեղեղ) պաշտպանվելու կանոնները, կկարողանա կիրառել դրանք,

նախնական գիտելիքներ կունենա ծայրահեղ իրավիճակներում, աղետների ժամանակ կողմնորոշվելու և վտանգից խուսափելու համար,

կհասկանա արտակարգ իրավիճակներում խուճապի վտանգավորությունը,

կգիտակցի փոխօգնության անհրաժեշտությունը,

կկարողանա՝

բացատրել վտանգ պարունակող իրավիճակները, դրանց հնարավոր հետևանքները,

կողմնորոշվել տարբեր վտանգավոր իրավիճակներում:

Ամփոփում (1 ժամ)

Պահուստային (3 ժամ)

4-րդ դասարան
(շաբաթական 2 ժամ, տարեկան 68 ժամ)

Թեմա 1. Բնություն (12 ժամ)

Երկիրը մեր ընդհանուր տունն է: Մեր մոլորակի բնության բազմազանությունը: Երկրի մակերևույթը. հարթավայրեր, բլուրներ, լեռներ: Մայրցամաքներ, օվկիանոսներ:

Երկրի օդային հագուստը. օդի դերը և նշանակությունը: Մեզ սնող հողը: Ջուրը բնության մեջ. օվկիանոսներ, ծովեր, գետեր, լճեր, աղբյուրներ: Խնայողական վերաբերմունք ջրի նկատմամբ: Կենդանի մոլորակ. բույսեր, կենդանիներ, մարդ: Փոխկապվածությունը բնության մեջ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

ընդհանուր պատկերացում կկազմի Երկիր մոլորակի՝ որպես բոլորի միասնական տան մասին,

կուսումնասիրի գլոբուսը, քարտեզ, նկարներ,

կնկարի իր պատկերացրած Երկիր մոլորակը,

կպատկերացնի, որ՝

Երկիր մոլորակն ունի հարուստ ու բազմազան բնություն,

մարդն ու բնությունը կապված են իրար հետ,

կիմանա՝

Երկրի մակերևույթի հիմնական ձևերը,

որ Երկրագնդի մեծ մասը ծածկված է ջրով, իսկ ցամաքի խոշոր մասերը մայրցամաքներն են,

կկարողանա քարտեզի կամ գլոբուսի վրա տարբերել ցամաքն ու ջուրը,

նկարները նայելով կտարբերակի ցամաքը, ջուրը և կղզիները,

կիմանա՝

որ Երկիրը պատված է մթնոլորտով (օդի հաստ շերտով),

որ շատ կարևոր է օդը մաքուր պահելը,

ինչ են մթնոլորտային տեղումները,

ջրի երեք վիճակների (պինդ, հեղուկ, գազային) մասին,

կկարողանա կատարել ջրի գոլորշիացման, սառեցման, հեղուկ վիճակի վերածելու պարզագույն փորձեր,

կիմանա, թե ինչ է աղբյուրը, գետը, լիճը, ծովը, օվկիանոսը, ինչով են հարուստ ծովերն ու օվկիանոսները,

խաղի միջոցով ցույց կտա բնության տարբեր բաղադրամասերը՝ գետեր, լճեր, լեռներ, անապատ և այլն,

գաղափար կունենա մարդկանց, բույսերի ու կենդանիների համար ջրի նշանակության մասին,

կկարողանա օրինակներ բերել կենցաղում ջրի խնայողական օգտագործման վերաբերյալ,

կկարողանա քարտեզի վրա ցույց տալ երկրագնդի խոշոր հարթավայրեր և լեռներ,

կիմանա՝

թե ինչպես է մարդն օգտագործում գետերի, լճերի, ծովերի և օվկիանոսների հարստությունները,

որ իր կարիքները բավարարելու համար մարդը մշակում է հողը, վարում է, փխրեցնում, ջրում, հեռացնում քարերը, պարարտացնում,

կկարողանա բացատրել, թե ինչու է աղտոտված ջուրը վնասակար մարդու և կենդանիների համար,

ծանոթ կլինի կյանքի տարբեր պայմաններին հարմարված բույսերի և կենդանիների օրինակների,

կկարողանա՝

ինքնուրույն դիտարկումներ կատարել իր շրջապատում տարածված բույսերի ու կենդանիների վերաբերյալ և դրանց արդյունքում պարզագույն խմբավորումներ կատարել,

դիտարկումներ անել մթնոլորտային երևույթների (տեղումների և քամու) վերաբերյալ,

մեկնաբանություններ անել հողի գլխավոր հատկանիշի՝ բերրիության (բերքատվության) վերաբերյալ,

կիմանա, թե ինչ է պետք է անել գետերի, լճերի, մաքրության պահպանության համար, Սևանա լճի օրինակով կկարողանա ներկայացնել դա,

կկարողանա պատմել իր շրջապատում եղած աղբյուրների առաջացման մասին,

կգիտակցի՝

մարդու տնտեսական գործունեության ազդեցությունը բնության վրա,

Երկրագունդը պահպանելու անհրաժեշտությունը:

Թեմա 2. Մարմիններ, նյութեր, մասնիկներ (5 ժամ)

Նյութերի բազմազանությունը, հատկությունները: Պինդ, հեղուկ, գազային նյութեր: Ջերմաստիճան, ջերմաչափ: Չափ ու կշիռ. Միավորները:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

պարզագույն գիտելիքներ կունենա պինդ, հեղուկ, գազային նյութերի մասին,

պատկերացում կունենա բնական և արհեստական նյութերի մասին, արհեստական նյութերի օրինակներ կբերի,

նախնական գիտելիքներ կունենա՝

մասնիկների շարժման և փոխազդեցության,

մարմինների չափերի,

մեծությունների (ջերմաստիճան, երկարություն, զանգված, ժամանակ) և դրանց միավորների,

չափման միավորների միասնական համակարգի մասին,

կկարողանա՝

օգտվել պարզագույն չափիչ սարքերից և կատարել չափումներ (երկարություն, կշիռ, ջերմաստիճան),

կատարել օդի, ջրի ջերմաստիճանի չափումներ և գրանցել դրանք,

փորձերի միջոցով հիմնավորել նյութերի փոխազդեցությունը և փոխակերպումը, դրանց վերաբերյալ կենցաղում հանդիպող օրինակներ բերել,

իր շրջապատում եղած նյութերը դասակարգել, դիտարկել նյութի մի տեսակից մյուսի փոխակերպումը և եզրահանգումներ անել:

Կրկնություն (1 ժամ)

Թեմա 3. Բնությունը և մարդը (9 ժամ)

Մարդու կախվածությունը շրջակա միջավայրից: Ինչպես է մարդը վերափոխել շրջակա աշխարհը: Աշխատանք (զբաղմունք, մասնագիտություն):

Տնտեսության գլխավոր ճյուղերը: Ապրանքափոխանակություն, առևտուր: Ինչ է փողը: Տնտեսությունը և բնությունը: Օգտակար հանածոներ, դրանց խնայողաբար օգտագործումը: Բնության վատթարացումը և մարդու դերը դրանում, բնության պահպանությունը: Բնությունը մարդու ստեղծագործություններում:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

նախնական գիտելիքներ կունենա մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցության և իր կյանքում բնության դերի մասին,

պատկերացում կունենա՝ աշխատանքի, մասնագիտության, ապրանքի, ծառայությունների մասին,

կգիտակցի աշխատանքի՝ որպես մարդու համար պատվաբեր գործունեության, նշանակությունը, կբերի համապատասխան առածների և ասացվածքների օրինակներ,

կիմանա՝

տնտեսության գլխավոր ճյուղերի մասին,

ապրանքափոխանակության և փողի մասին,

թե ինչ են օգտակար հանածոները,

նախնական գիտելիքներ կունենա՝

մարդու արտադրական գործունեության, օգտակար հանածոների,

անտառահատման և մարդու այլ գործունեության հետևանքով բնությանը հասցված վնասների,

բնության աղտոտվածության, աղբի կուտակումների հետևանքների մասին,

կկարողանա՝

ուսումնական իրավիճակում իրականացնել ապրանքափոխանակություն և առևտուր,

պարզաբանել փողի նշանակությունը, դրամական միավորների օրինակներ բերել,

օրինակներով պարզաբանել մարդու կախվածությունը շրջակա միջավայրից,

կիմանա կենցաղային թափոնների երկրորդային մշակման մասին,

կկարողանա մեկնաբանել բնության հանդեպ իր և ուրիշների արարքների հնարավոր հետևանքները,

կհասկանա շրջակա միջավայրի աղտոտվածության հասցրած վնասը բնությանը:

Թեմա 4. Մեր հայրենիքը (11 ժամ)

Հայաստանն իմ հայրենիքն է: Մեր պետականության խորհրդանիշները՝ զինանշան, դրոշ, օրհներգ: Ազգային-պետական տոներ: Հայաստանի հարևան պետությունները: Հայաստանի մարզերը, քաղաքները:

Մեր հայրենիքի անցյալը և ներկան: Տարիների հաշվումը պատմության մեջ: Նշանավոր գործիչներ և իրադարձություններ, մշակութային արժեքներ (մագաղաթյա ձեռագրեր, մանրանկարչություն, խաչքար):

Կրկնություն (1 ժամ)

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

նախնական գիտելիքներ կունենա Հայաստանի Հանրապետության, մայրաքաղաք Երևանի և այլ քաղաքների մասին,

կճանաչի՝

Հայաստանի Հանրապետության դրոշը, զինանշանը, պետական օրհներգը,

ազգային-պետական տոները, կկարողանա թվարկել մի քանի տոներ,

կկարողանա թվարկել Հայաստանի լճերը, գետերը, լեռները, հարևան պետությունները, ցույց տալ դրանք քարտեզի վրա,

ծանոթ կլինի հայ ժողովրդի անցյալի ու ներկայի նշանակալի որոշ իրադարձությունների,

կիմանա հայազգի մի քանի նշանավոր գործիչների անուններ, առանձին փաստեր նրանց կյանքի ու գործունեության մասին,

նախնական գիտելիքներ կունենա՝

իր հայրենիքի պատմության ու մշակութային արժեքների (ճարտարապետական հուշարձաններ, ձեռագիր մատյաններ, մանրանկարներ, խաչքարեր),

մարզական նվաճումների մասին,

կկարողանա՝

տարբերակել ժամանակագրական միավորները (տարի, հարյուրամյակ և այլն),

բացատրել Հայաստանում ընդունված թվագրության համակարգը (տարիների հաշվումը Քրիստոսի ծննդից սկսած),

կիմանա Հայաստանի Հանրապետության մարզերի, մարզկենտրոնների մասին, կկարողանա ցույց տալ դրանցից մեկ-երկուսը քարտեզի վրա:

Թեմա 5. Ճանապարհորդություններ և աշխարհագրական հայտնագործություններ (11 ժամ)

Կողմնորոշում տեղանքում, հորիզոն, հորիզոնի կողմերը, կողմնացույց:

Ճանապարհորդություններ վաղ անցյալում: Ճանապարհորդություն դեպի Չինաստան և Հնդկաստան:

Ամերիկայի հայտնագործումը: Ճանապարհորդություններ Աֆրիկայով, Ավստրալիայի հայտնագործումը, Անտարկտիդայի հայտնագործումը:

Շուրջերկրյա ճանապարհորդություններ: Ժամանակակից ճանապարհորդությունները օվկիանոսներում, տիեզերքում:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

կունենա շրջակայքում կողմնորոշվելու նախնական գիտելիքներ և հմտություններ,

կկարողանա առարկաների օգնությամբ կողմնորոշվել տեղանքում,

կիմանա, թե ինչ է հորիզոնը,

կկարողանա արևի օգնությամբ որոշել հորիզոնի կողմերը,

պատկերացում կունենա գլոբուսի և աշխարհագրական քարտեզի վերաբերյալ,

տեղեկություններ կունենա՝

անցյալում կատարված ճանապարհորդությունների,

Ամերիկայի, Ավստրալիայի, Անտարկտիդայի հայտնագործման և Հարավային բևեռի նվաճման մասին,

նախնական գիտելիքներ կունենա շուրջերկրյա ճանապարհորդությունների մասին,

կունենա քարտեզից օգտվելու նախնական գիտելիքներ և հմտություններ,

կկարողանա կողմնացույցով որոշել հորիզոնի կողմերը, կողմնորոշվել տեղանքում,

նախնական գիտելիքներ կունենա նոր մայրցամաքների հայտնագործման, դրանց հետազոտման մասին, տիեզերքում և օվկիանոսում կատարվող ժամանակակից ճանապարհորդությունների մասին,

կկարողանա կողմնորոշվել և տեղաշարժվել տեղանքում՝ պայմանական նշանների օգնությամբ, տեղանքի օբյեկտների միջոցով որոշել հորիզոնի կողմերը:

Կրկնություն (1 ժամ)

Թեմա 6. Ես և հասարակությունը (7 ժամ)

Իրավունք և պարտականություն:

Հանդուրժողականություն, իրավահավասարություն: Միջմշակութային հաղորդակցություն, ընդունել և հարգել տարբերությունները:

Փոփոխությունները մարդու կյանքում. ինչով են դրանք պայմանավորված: Անհատի դերը ապագայի ընտրության հարցում:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը՝

նախնական գիտելիքներ կունենա մարդկանց լեզվական, մշակութային, ռասայական, տարիքային, սեռային և այլ տարբերությունների մասին,

կիմանա հասարակական վարքի կանոնները, իր իրավունքներն ու պարտականությունները,

կհասկանա նախապաշարումների վտանգը և կկարողանա օրինակներ բերել,

կբացատրի մարդկանց փոխհարաբերություններում հավասարության, արդարության, բարեկամության և խաղաղության կարևորությունը,

կկարողանա՝

պահպանել համակեցության կանոնները,

օգտվել մարդու, հասարակության և շրջապատող աշխարհի մասին տեղեկատվության տարբեր աղբյուրներից:

Ամփոփում (2 ժամ)

Պահուստային (8 ժամ)

Արժեքային համակարգ

Ներկայացվող պահանջներն արտահայտվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու, ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով: «Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դասարաններ) դասընթացի ուսումնասիրման արդյունքում սովորողը պետք է՝

- հետաքրքրասիրություն հանդես բերի աշխարհի նկատմամբ՝ իր ողջ բազմազանությամբ,
- հանդուրժող և բարյացակամ վերաբերմունք դրսևորի այլ մշակույթների նկատմամբ,
- հոգատար լինի կենդանի էակների հանդեպ,
- գիտակցի բնական պաշարների սահմանափակ լինելը, խնայողական վերաբերմունք ունենա բնական պաշարների հանդեպ,
- սիրի բնությունը, գնահատի նրա գեղեցկությունը,
- պատասխանատու վարքագիծ ունենա բնության հանդեպ,
- սիրի հայրենիքը, պատասխանատու վարքագիծ ունենա հայրենիքի հանդեպ,
- կարևորի իր հայրենիքի պատմամշակութային արժեքները,
- լինի ընկերասեր, կարևորի փոխօգնությունն ու համագործակցությունը,
- գնահատի ուրիշների աշխատանքը և հաջողությունները,
- կարևորի բարեկիրթ հաղորդակցման դերը միջանձնային հարաբերություններում, կարողանա համագործակցել
- լինի ազնիվ, արդարամիտ, բարի, պարտաճանաչ, պատասխանատու,
- չհանդուրժի կեղծիքը, իրավունքների ոտնահարումը և անարդարությունը,

• գիտակցի սեփական կարծիքը հստակ ձևակերպելու, ուրիշներին հասկանալու անհրաժեշտությունն ու կարևորությունը փոխըմբռնման համար:

7. «Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դասարաններ) առարկայի՝ ուսումնական նյութերով աշխատելու մեթոդական առանձնահատկությունները

Ուսուցման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու, այսինքն՝ սովորողների հետ տարվող աշխատանքներն ավելի դյուրին և հետաքրքիր դարձնելու համար մեծ նշանակություն ունեն ուսումնական նյութերի ճիշտ ընտրությունն ու դրանց հետ աշխատանքների խելամիտ կազմակերպումը: Ուսումնական նյութերի ընտրությունը ինքնանպատակ լինել չի կարող: Դրանք ընտրվում են.

- առարկայական չափորոշիչների, ծրագրերի, ուսուցանվող թեմաների պահանջներին համապատասխան
- սովորողների նախագիտելիքներին համապատասխան
- սովորողների առանձնահատուկ պայմանների կարիքներին համապատասխան:

Հատուկ կարիքներով սովորողներին ուսուցման գործընթաց հաջողությամբ ներառելու համար ուսուցչին՝ համապատասխան գիտելիքներից ու մասնագիտական որակներից բացի, անհրաժեշտ են նաև ուսուցման մեթոդների ճիշտ ընտրության կարողություններ: Ուսուցման այս կամ այն մեթոդի ընտրությունը ևս ինքնանպատակ լինել չի կարող. այն անպայման պետք է բխի ուսուցման նպատակներից ու խնդիրներից և տվյալ ուսումնական նյութի ուսուցման կամ դասի առանձնահատկություններից: Ուսուցման արդյունավետության բարձրացմանն են նպաստում նաև ուսումնական միջավայրի, կահավորման, օգտա-

գործվող ուսումնական առարկաների նկատմամբ ուսուցչի հատուկ ուշադրությունը:

Ուսուցիչը պետք է կարողանա ճիշտ նախատեսել և նախապատրաստել այն նյութերն ու պիտույքները, որոնք պետք է օգտագործվեն դասի ընթացքում: Դրանք կարող են լինել ինչպես հատուկ ձեռք բերված, այնպես էլ շրջապատում հանդիպող իրեր:

Ուսուցման գործընթացում հաճախակի օգտագործվող դիդակտիկ նյութեր են `

- առօրյա կյանքում օգտագործվող առարկաներն ու նյութերը
- գրենական, նկարչական պիտույքները
- գրքեր կամ տպագիր այլ նյութեր
- ուսումնական սարքերը, սարքավորումները
- կառուցողական նյութերը, դեկորները, թատերական պարագաները
- կաղապարված, ինքնաշեն առարկաները (մուլիաժները)
- բնական նյութերը, կենդանիները, բույսերը և այլն:

Երբեմն այդ նյութերը կարող են ստեղծվել հենց սովորողների ուժերով կամ նրանց մասնակցությամբ: Օրինակ՝ ուսումնական նյութ կարող են ծառայել սովորողի կողմից հավաքած աշնանային դեղնած տերևները կամ դրանցից պատրաստված կոլաժները:

Երբ սովորողն ընդգրկվում է նյութերի հավաքման ու ստեղծման գործընթացի մեջ, ավելի ակնառու է դառնում նրանց մասնակցությունը, իսկ ուսումնական նյութի արդյունավետությունը էապես մեծանում է:

Կարևոր է նաև օգտագործվող ուսումնական նյութերի բազմազանությունը և գրավչությունը: Անհրաժեշտ է, որ դրանք համապատասխանեն սովորողների տարիքային առանձնահատկություններին, ան-

հատական կարիքներին և, ամենակարևորը, նպաստեն բուն թեմայի ընկալմանն ու յուրացմանը: Դասընթացի յուրաքանչյուր թեմա ունի իր առանձնահատկությունները: Ուսումնական նյութի ընտրության դեպքում ոչ միայն պետք է հաշվի առնել դա, այլև այնպես անել, որ նյութերը չկրկնվեն, լինեն բազմազան: Այդ դեպքում սովորողները քիչ կհոգնեն, չեն ձանձրանա, ուշադրությունը երկար կմնա կենտրոնացած:

Առաջարկվող ուսումնական նյութերը պետք է նաև առավելագույնս համապատասխանեն սովորողի կարիքներին: Իսկ դրա համար որոշ դեպքերում հարկ կլինի չփոխելով դրանց հիմնական բովանդակությունը՝ դարձնել այն սովորողի համար մատչելի:

Ուսուցիչը սովորողներին պետք է ուղղորդի դասագրքում զետեղված նյութերով աշխատելու ընթացքում: Դասագրքի նյութերն ուսուցիչը կարող է հարմարեցնել տարբեր կարողություններ ունեցող սովորողների համար: Դասագրքերն ունեն հարուստ նկարազարդում: Այստեղ զետեղված են համապատասխան նկարներ, քարտեզներ, գծապատկերներ, որոնք միշտ պետք է լինեն ուշադրության կենտրոնում, ուսումնասիրվեն և ի մի բերվեն՝ զուգակցելով բնության դիտումներին, էքսկուրսիաներին, ինքնուրույն կատարած ուսումնասիրություններին:

Ուսուցանվող նյութերի նկատմամբ սովորողի հետաքրքրությունը մեծանում է նաև տարբեր խաղերի, էքսկուրսիաների միջոցով:

«Ես և շրջակա աշխարհը» դասընթացի համար կարևոր նշանակություն ունեն ուսումնական գործընթացի կազմակերպման այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ **ուսումնական էքսկուրսիաները, դիտումները և փորձերը:**

Էքսկուրսիաներն ունեն ճանաչողական և դաստիարակչական մեծ նշանակություն: Դրանք նաև մեծապես նպաստում են սովորողների գի-

տելիքների ընդլայնմանը: Էքսկուրսիայի ընթացքում սովորողը հնարավորություն է ստանում բնության առարկաներն ու երևույթները տեսնել բնական միջավայրում, դիտել բույսերի կապը հողի, կենդանիներինը՝ բույսերի հետ: Տեսնել և ընկալել բնությունը որպես մեկ ամբողջություն, հասկանալ, որ բնության բաղադրիչները սերտորեն կապված են միմյանց հետ:

Էքսկուրսիաների ընթացքում սովորողները հնարավորություն են ունենում կատարել դիտումներ, համեմատություններ, սովորում են կողմնորոշվել տեղանքում, ինչպես նաև կապեր են հաստատում դիտարկված բնության առարկաների և երևույթների միջև: Դրա շնորհիվ ձևավորվում են աշակերտների՝ շրջակա միջավայրը ինքնուրույն ուսումնասիրելու կարողությունները:

Էքսկուրսիաներ կարելի է կազմակերպել դեպի թանգարաններ, ցուցասրահներ, տեսարժան վայրեր, ինչպես նաև դպրոցի մոտակա պուրակը, այգին կամ որևէ նման վայր, անմիջապես տեղում կատարել դիտումներ, ուսումնասիրություններ, հավաքել նյութեր՝ տերևներ, ճյուղեր և այլն:

Դասընթացում մեծ նշանակություն է տրվում նաև սովորողների կողմից շրջակա բնության **դիտումներին**: Դրանց հիման վրա սովորողների մեջ ձևավորվում են կոնկրետ պատկերացումներ բնության երևույթների վերաբերյալ: Այսպես, օրինակ, դիտումների շնորհիվ սովորողներն անմիջականորեն ընկալում են կենդանի և անկենդան բնության բաղադրատարրերը: Դիտումների շնորհիվ ձևավորվում են այնպիսի կարևոր որակներ, ինչպիսիք են՝ դիտողականությունը, ուշադրության կենտրոնացումը, հետաքրքրասիրությունը և այլն: Հայտնի է, որ ուսման դժվարություններ ունեցող սովորողների մտածողությունն ակ-

նառու-պատկերավոր է. ուստի էքսկուրսիաները, դիտումներն ու փորձերը մեծ նշանակություն ունեն նրանց ուսումնական գործընթացում ներառելու իմաստով:

Սովորողների գործնական-ուսումնական կարողությունների զարգացման լավագույն միջոց են նաև աշխատանքային տետրերը: Դրանք հնարավորություն են տալիս ինքնուրույն գրելու գործողություն կատարելու, ներկելու, ուրվագծելու, արտանկարելու և այլն:

8. Ուսումնական գործունեության տեսակներ

Ուսուցման գործընթացում, պայմանավորված թեմայի, դասի նպատակի, դասարանի սովորողների առանձնահատկություններով, առկա հնարավորություններով և այլ հանգամանքներով, տվյալ դասի կամ դասի առանձին հատվածի համար, ըստ նպատակահարմարության, կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները.

- ուսումնական նյութի բացատրում, լուսաբանում ինչպես ուսուցչի, այնպես էլ սովորողների կողմից,
- երևույթների դիտարկում, մեկնաբանում,
- տեղանքի ուսումնասիրում, իրադրությունների հետազոտում,
- նկարների, ֆիլմերի դիտում, քննարկում,
- ուսումնական ձեռնարկների և այլ աղբյուրների ուսումնասիրում,
- գործնական և փորձնական աշխատանքների կատարում,
- գրաֆիկական աշխատանքների կատարում,
- արվեստի ստեղծագործությունների դիտում և հետազոտում,
- հիմնահարցերի հետազոտում,
- կոնֆլիկտային իրավիճակների քննարկում,
- ստեղծագործական աշխատանքների կատարում, ներկայացում,
- տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարում,
- խաղերի, մրցույթների, հանդեսների կազմակերպում,
- բանավեճերի, քննարկումների, դերային խաղերի կազմակեպում,

- իրավիճակների դիտարկում և արդյունքների վերլուծում,
- հաշվետվությունների պատրաստում, ներկայացում,
- նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի օգտագործում,
- անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:

9. Գրականության ցանկ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 2011:
2. Հանրակրթության պետական չափորոշիչ, 2011:
3. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն. և ուրիշներ, Կյանքի հմտություններ, Ձեռնարկներ ուսուցիչների համար, 1-5-րդ դասարաններ, 2001-2003:
4. Ջեյմս Ռ. Սթոքիարդ Կրտսեր, Մեթոդներ և միջոցներ տարրական և միջին դպրոցի հասարակագիտական առարկաների համար, 2001:
5. Հովհաննիսյան Գ. և ուրիշներ, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, «Տիգրան Մեծ», Երևան, 2004:
6. Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Այրեքս, Երևան, 2004:
7. Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր, Ձեռնարկ մանկավարժների համար, Երևան, 2005:
8. Հասարակագիտության ինտեգրված ուսուցում, Ձեռնարկ մանկավարժների համար, Երևան, 2006:
9. Ինտեգրված թեմատիկ միավորներ, Ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների պատրաստման ու վերապատրաստման համար, Երևան, 2003.
10. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին, Այլընտրանքային մեկնաբանություն, Այրեքս, Երևան, 2004:
11. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Ձեռնարկ ուսուցիչների համար, Այռեքս, Երևան, 2001:
12. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Ձեռնարկ ուսուցիչների համար, Այրեքս, Երևան, 2003.
13. Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում, Ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների համար, Այրեքս, Երևան, 2001:
14. Standards of Learning for Virginia Public Schools, Board of Education, June 2004.

15. Standards for Excellence in Education, CBE, ASCD, Alexandria, Virginia, 1998
16. Gardner Howard, Intelligences for the 21st Century. New York, basic Books, 1999.
17. Thomas R. Hoer. Becoming Multiple Intelligences School. ASCD, Alexandria, Virginia, 2000.
18. Иоффе А. Н., Зеленцова А. В., Современные подходы к гражданскому образованию в России.Преподавании курсов истории и обществознания в общеобразовательных учреждениях. Санкт-Петербурга в 2002/2003 учебном году,
19. Журнал "Обществознание в школе" за 2005 г.
20. Turner, Thomas. (1999). Essentials of elementary social studies, second edition, Allyn and Bacon,.
21. Борзова Л. П. Методика преподавания обществознания в начальной школе:История: Краеведение: Экономика: Право: ОБЖ: М.,ВЛАДОС-ПРЕСС,2004.
22. Боголюбов Л. Н. "Оценка качества подготовки выпускников основной школы по обществознанию." М. Дрофа, 2001.
23. Hoge, J.D. (2002). Character Education, Citizenship Education, and the Social Studies. The Social Studies. 93 (3), 103-109.
24. Macdonald, J. (1965). A Philosophy of Education. Glenview, Illinois: Scott, Foresman and Company.
25. Chapin, June. 2003, A Practical Guide to Secondary Social Studies, London, Pearson Education

Բ ո վ ա ն դ ա կ ո ւ թ յ ո ւ ն

- Բացատրագիր…… 3
- Հայեցակարգ…….. 4
- Առարկայի ուսումնական ընդհանուր նպատակները……. 6
- Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների «Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դասարաններ) առարկայի ծրագրի կառուցվածքը …… 9
- «Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դասարաններ) առարկայի ծրագրի թեմատիկ շարք …….. 12
- «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ծրագրի բովանդակությունը և սովորողներին ներկայացվող պահանջներ…… 14
- «Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դասարաններ) առարկայի ուսումնական նյութերով աշխատելու մեթոդական առանձնահատկությունները…….. 38
- Ուսումնական գործունեության տեսակներ……. 43
- Գրականության ցանկ……... 45

ԹԵԹԵՎ ՄՏԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ

«Ե Ս Ե Վ Ծ Ր Ջ Ա Կ Ա Ա Ծ Խ Ա Ր Հ Ը»

ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

2-4-րդ դասարաններ

Հրատարակչական աշխատանքները՝

Աստղիկ Միրզաթունյանի

Սրբագրիչ՝

Գոհար Ամիրբեկյան

ê ï áñ³ ·ñí³Í ¿ ï å³ ·ñáõÃÛ³Ý 19. 11. 2012 Ã.:
Ì³í³ÉÁ' 3 Ù³ÙáõË:
üáñÙ³ ï' 70X100$^{1}/_{16}$:
î å³ ·ñáõÃÛáõÝÁ' ûýë»Ã:
§Î ñÃáõÃÛ³Ý ³½· ³ÛÇÝ ÇÝë ï Ç ï áõ ï ¦, ºñև³Ý, î Ç·ñ³Ý Ø»ÍÇ 67, Ñ»é.՝ 57 48 20: